ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Անդրանիկ Մարտինի Մանուկյան

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՌՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ. ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԺԲ.00.05. - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Андраник Мартинович Манукян

ПРИЧИНЕНИЕ ВРЕДА ПРИ ЗАДЕРЖАНИИ ЛИЦА, СОВЕРШИВШЕГО ПРЕСТУПЛЕНИЕ: СОВРЕМЕННАЯ СИТУАЦИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05. – “Уголовное право и криминология; уголовно-исполнительное право”

ЕРЕВАН 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի
պետական համալսարանում

Գիտական ղեկավար	իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Տ.Վ. Սիմոնյան
Պաշտոնական ընդդիմախոսներ	իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
	իրավ. գիտ. թեկնածու, Ա.Պ. Ղուկասյան
Առաջատար կազմակերպություն՝	«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ուսումնական կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2013թ.-ի հուլիսի 4-ին, ժամը 14^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ.-ի հունիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա. Գ. Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:	кандидат юридических наук, доцент Т.В. Симонян
Официальные оппоненты:	доктор юридических наук, доцент С.А. Дилбандян
	кандидат юридических наук, А.П. Гукасян

Ведущая организация: Академия образовательного комплекса полиции РА

Защита состоится 4 июля 2013г., в 14^{00} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 4 июня 2013 г.

Ученный секретарь специализированного совета,
доктор юридических наук, доцент А.Г. Вагаршян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ընդհանուր սոցիալական հիմնախնդիրների շարքում առաջացավ պատշաճ կարգուկանոնի հաստատման, հանցագործությունների դեմ պայքարի ապահովման, կազմակերպված, ագրեսիվ քրեական դրսևորումների կանխարգելման հիմնախնդիրը, որը լուծելու ճանապարհին հաճախ պետական իրավասու մարմինները կամ քաղաքացիները, փորձելով կանխել հանցագործությունները կամ բռնել հանցանք կատարած անձանց, ստիպված են կատարել արարքներ, որոնք վնասում են քրեական օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերությունները: Նման արարքների իրավաբանական գնահատականը ոչ միշտ է միանշանակ, քանի որ արտաքին հատկանիշներով դրանք շատ հաճախ համընկնում են քրեական օրենքով նախատեսված համապատասխան արարքների հետ: Այս է պատճառը, որ պետությունը, փորձելով օգտագործել հանցավորության դեմ պայքարի բոլոր հնարավոր և հասանելի միջոցներն ու եղանակները, միաժամանակ սահմանում է իրավական հատուկ կարգավորում ստացած ինստիտուտներ, որոնց հիմքով հանցագործությունները կանխելու կամ հանցանք կատարած անձին բռնելու ընթացքում կատարված և արտաքնապես հանցագործության հատկանիշներ պարունակող արարքները համարվում են իրավաչափ: Այս համատեքստում է, որ առաջնային դեր և նշանակություն է ձեռք բերում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը, որն ապահովում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների, հասարակության ու պետության շահերի պաշտպանությունը :

Մինչև վերջին ժամանակները հայաստանյան քրեական օրենսդրության մեջ բացակայում էին հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության մասին նորմերը: Քրեաիրավական տեսանկյունից հանցանք կատարած անձին վնաս պատճառելու հարցերը դիտարկվում էին անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի շրջանակներում, ինչը չէր կարող չանդրադառնալ դրա տեսական մշակվածության վրա: Միայն 2003թ.՝ ՀՀ նոր քրեական օրենսգրքի գործողության մեջ դրվելուց հետո, տվյալ ինստիտուտը ստացավ իր օրենսդրական արտահայտությունը:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավական կարգավորումը նախատեսող ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածը, դրանում տեղ գտած ձևակերպումների, հետևաբար՝ իրավաբանական վճռորոշ նշանակություն ունեցող մի շարք հարցերի կարգավորման տեսանկյունից դեռևս լիարժեք, առավել ևս՝ կատարյալ համարվել չի կարող: Նշված հանգամանքն է, թերևս, պատճառը, որ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի կիրառման հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերը խիստ սակավաթիվ են. 2003թ. մինչ օրս ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի կիրառմամբ արձանագրվել է քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդում

չիրականացնելու ընդամենը 3 դեպք, ինչն էլ, կարծում ենք, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու, նաև՝ բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման դեպքերի լատենտայնության լավագույն ապացույցն է :

Վերոշարադրյալի կապակցությամբ մեր կողմից չափազանց կարևորվում է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի, դերն ու նշանակությունը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, որի հիման վրա առաջնային նշանակություն է ձեռք բերում այս ինստիտուտի՝ հնարավորինս լիարժեք իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու քրեաիրավական ինստիտուտի մշակման գործում էական ներդրում են ունեցել Յու. Վ. Բաուլինի, Ս. Վ. Բորոդինի, Գ. Վ. Բուշուևի, Վ.Պ.Դիդենկոյի, Ն. Դ. Դուրմանովի, Ն. Ի. Զագորոդնիկովի, Վ. Ֆ. Կիրիչենկոյի, Վ.Ն.Կոզակի, Գ. Ս. Կուրբանովի, Բ. Ա. Կուրինովի, Ա. Ի.Մարցևի, Ն.Ն.Պաշե-Օզերսկու, Ա.Ա. Պիոնտկովսկու, Է. Ն. Պոբեգայլոյի, Վ. Պ. Ռևինի, Բ.Վ. Սիդորովի, Ի.Ի. Սլուցկու, Ի. Ս. Տիշկևիչի, Վ. Ի. Տկաչենկոյի, Տ. Գ. Շագուլիձեյի, Ե.Ա.Ֆրոլովի, Ա. Մ. Յարեգորոդցևի, Մ. Ի. Յակուբովիչի և այլ գիտնականների աշխատությունները: Նշված հեղինակները, սակայն, արարքի հանցավորությունը բացառող այս հանգամանքի հետ կապված մի շարք հարցերի՝ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի բնույթի, էության, արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների համակարգում նրա տեղի վերաբերյալ միասնական դիրքորոշում չեն արտահայտում: Այս հեղինակների աշխատություններում լիարժեք հետազոտման չեն ենթարկվել բռնելիս վնաս պատճառելու հիմքերին ու պայմաններին, վնաս պատճառելու սուբյեկտին, թույլատրելի սահմաններին վերաբերող բազմաթիվ հարցեր: Այս է պատճառը, որ դիտարկվող ինստիտուտը չի կարող համարվել տեսականորեն բավականաչափ մշակված, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության մասին բազմաթիվ դրույթներ դեռևս չունեն ամուր տեսական հիմք, քննարկման առարկա են, իսկ դրանցից որոշները գրեթե հետազոտված չեն, որի հետևանքով հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու կոնկրետ դեպքերի փաստով քրեաիրավական նորմերի կիրառումը մինչ օրս մեծ դժվարությունների հետ է կապվում:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքում քննարկվող ինստիտուտի ամրագրումը պահանջում է նաև արարքի հանցավորությունը բացառող այս հանգամանքի բարոյական և սոցիալական ասպեկտների համակարգված վերլուծություն, դրա կիրառման համար գիտականորեն հիմնավորված կանխադրույթների մշակում:

Հետազոտության օբյեկտը: Ատենախոսական հետազոտության օբյեկտ են հանդիսացել հանրորեն վտանգավոր արարքներ կատարած անձանց բռնելու և իրավասու մարմիններ հանձնելու ընթացքում նրանց վնաս պատճառելիս առաջացող հասարակական հարաբերությունները:

Հետազոտության առարկան: Հետազոտության առարկան են հանդիսացել հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը

կարգավորող իրավանորմերը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն հետազոտության նպատակը հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտին վերաբերող տեսական ու գործնական հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրությունն է:

Նշված նպատակից բխում են հետազոտության հետևյալ հիմնական խնդիրները.

- Ուսումնասիրել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներին, հանցանք կատարած անձին բռնելուն վերաբերող հայրենական և արտասահմանյան քրեական օրենսդրությունների նորմերը,

- Վերլուծել հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու քրեաիրավական ինստիտուտի բնույթն ու առանձնահատկությունները, դրա հարաբերակցությունը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ,

- Հետազոտել հանցանք կատարած անձին բռնելու հիմքերն ու պայմանները, սահմանել բռնելու միջոցների թույլատրելի շրջանակները,

- Վերլուծել հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված, ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված կոնկրետ հանցագործությունների տեսակները,

- Ներկայացնել առաջարկություններ՝ այս ինստիտուտը կարգավորվող օրենսդրության կատարելագործման և դրա կիրառման պրակտիկայի բարելավման ուղղությամբ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքը ձևավորել են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի գիտական վերլուծությանը նվիրված Ա. Հ. Գաբուզյանի, Յու. Վ. Բառլինի, Ս. Վ. Բորոդինի, Գ. Վ. Բուշուևի, Վ.Պ.Դիդենկոյի, Ն. Դ. Դուրմանովի, Վ.Ն.Կոզակի, Գ. Ս. Կուրբանովի, Է. Ն. Պոբեգայլոյի, Ի. Ս. Տիշկևիչի, Վ. Ի. Տկաչենկոյի և այլ գիտնականների աշխատությունները:

Հետազոտության իրավական հիմքը: Հետազոտության իրավական հիմքը կազմել են ՀՀ սահմանադրությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ինչպես նաև հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող այլ, այդ թվում՝ արտասահմանյան երկրների օրենքներ և իրավական ակտեր:

Հետազոտության փորձառական հիմքը: Հետազոտության փորձառական հիմքն է կազմել ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի և ՀՀ դատական դեպարտամենտի վիճակագրական տեղեկատվությունը: Բացի այդ, հետազոտության խնդիրների արդյունավետ և լիարժեք լուծման նկատառումներով նախապես մշակված ծրագրով առավել վիճելի և գիտական հիմնավորում պահանջող դրույթների վերաբերյալ համապատասխան հարցումներ են անցակացվել դատավորների, դատախազների, ոստիկանության քննիչների և ուսանողների, ընդհանուր առմամբ՝ 100 անձանց մեջ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության

մեթոդաբանական հիմք են կազմում դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները: Փորձառական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով կիրառվել են նաև այնպիսի հատուկ մեթոդներ, ինչպիսիք են հարցումը, փաստաթղթերի հետազոտումը և վիճակագրական տվյալների վերլուծությունը:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն առաջին հերթին կայանում է նրանում, որ այն հանդիսանում է ՀՀ -ում առաջին հետազոտությունը, որում ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների հիման վրա համալիր կերպով ուսումնասիրվում են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հետ կապված հարցերը:

Բացի այդ, նոր գիտական արդյունքներ են հանդիսանում.

- Հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելու համար պատասխանատվության վերաբերյալ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը,
- Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված սահմանազանցման կոնկրետ տեսակների որակման կանոնների գիտական հիմնավորումը, ինչպես նաև դրանց՝ ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված լինելու նպատակահարմարության վերաբերյալ հարցերի վերլուծությունը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածում «Հանցանք կատարած անձ» եզրույթն անհրաժեշտ է փոխարինել «Հանրերեն վտանգավոր արարք կատարած անձ» եզրույթով:
2. ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել ներկայիս կարգավորմամբ բռնելիս վնաս պատճառելն իրավաչափ դարձնող նպատակներից մեկը՝ անձի կողմից նոր հանրորեն վտանգավոր ոտնձգություններ կատարելը խափանելու նպատակը:
3. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու՝ որպես նրան բռնելու միակ միջոց հանդիսանալու հանգամանքը ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ է նախատեսել որպես բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման:
4. Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափությունը հիմնվում է նաև սոցիալ- բարոյական և էթիկական չափանիշների վրա: Որպես հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հիմնական պայման հանդիսանում են.

ա) Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին պատճառած վնասի բնույթի և վնաս պատճառելու նպատակների միջև հակասության բացակայությունը,

բ) Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելու համար նրան վնաս պատճառելու անհրաժեշտությունը,

գ) Բռնելու ընթացքում պատճառվող վնասը հանդես է գալիս որպես նպատակին հասնելու միջոց: Վնասի պատճառումը միշտ սահմանափակված է ողջամիտ բավարարության և համաչափության շրջանակներով:

5. Անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածը և որպես արտոնյալ բնորոշվող սպանությունների շարքից բացառել բռնելիս հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի սպանությունը:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով անհրաժեշտ է նախատեսել հանորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հետևյալ սահմանումը.

«1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին վնաս է պատճառել նրան՝ իրավասու մարմիններին հանձնելու նպատակով բռնելիս, եթե անձին բռնելը չէր կարող իրականացվել վնաս պատճառելու հետ չկապված գործողություններով, և թույլ չի տրվել բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում:

2. Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, որի հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ:

3. Բռնելիս հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին կյանքից զրկելն արգելվում է»:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը աշխատանքի արդյունքում ստացված եզրակացությունների ու առաջարկությունների՝ քրեական իրավունքի գիտության մեջ և պրակտիկայում ներդրվելու հնարավորության մեջ է, քանի որ դրանք լրացնում են ժամանակակից պայմաններում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի կիրառման տեսական դրույթների վերաբերյալ բացը:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ հեղինակի եզրակացություններն ու առաջարկություններն առաջին հերթին կարող են օգտագործվել հանցանք կատարած անձին բռնելու իրադրությունում կատարված գործողությունների իրավաբանական գնահատականի հետ կապված կոնկրետ իրավակիրառ աշխատանքում, հատուկ իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց՝ հանցանք կատարած անձանց ձերբակալման գործողությունները կարգավորող մեթոդիկ նյութերի, օրենսդրական ակտերի նախապատրաստման ժամանակ, բարձրագույն և մասնագիտական ուսումնական հաստատություններում քրեական իրավունքի դասավանդման դասընթացի ուսումնական գործընթացում, կադրերի մասնագիտական պատրաստման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ինչպես նաև արտացոլվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ընդհանուր 10 պարագրաֆ ներառող 3 գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը պատրաստվել է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից սահմանված պահանջներին համապատասխան:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, ատենախոսության մեթոդաբանական հիմքը և մեթոդիկան, գիտական նորույթը, հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը՝ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքերի շարքում» վերտառությամբ գլուխը բաղկացած է չորս պարագրաֆներից:

Առաջին, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի պատմական զարգացումը» վերտառությամբ պարագրաֆում, հեղինակն անդրադարձել է քննարկվող ինստիտուտի զարգացման և որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանք կայանալու պատմական փուլերին: Պարագրաֆում վկայակոչվել են հայ իրավական և քաղաքական մտքի հնագույն ներկայացուցիչների դատաստանագրքերում, արտասահմանյան երկրների իրավունքի հնագույն աղբյուրներում ոտնձգություն կատարած անձին բռնելու իրավիճակներին վերաբերող կոնկրետ իրադրությունների կարգավորումները: Անդրադարձ է կատարվել նաև խորհրդային հանրապետությունների օրենսդրություններում նշված ինստիտուտն առանձին կերպով չնախատեսելու, հանցանք կատարած անձին բռնելու իրադրություններն անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի ներքո դիտարկվելու հանգամանքին, վկայակոչվել են բռնելիս վնաս պատճառելու իրադրություններն անհրաժեշտ պաշտպանության իրավիճակներին հավասարեցվելու վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պլենումի ղեկավար պարզաբանումները, առանձնացվել և քննարկվել են նշված ինստիտուտը հետխորհրդային, նորանկախ պետությունների քրեական օրենսդրությունում որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանք նախատեսելու նախադրյալները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հեղինակը եզրահանգել է, որ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավիճակների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանյան

երկրներում մշտապես առկա է եղել: Միևնույն ժամանակ, հեղինակն արձանագրել է, որ բռնելիս վնաս պատճառելու իրավիճակները, չնայած օրենսդրորեն անհրաժեշտ պաշտպանության իրադրությանը հավասարեցվելու և անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի նորմերով կարգավորման ենթակա լինելու հանգամանքին, այնուամենայնիվ, միշտ էլ որոշակի հատկանիշների բերումով փաստացի առանձնացվել են և դիտարկվել առանձին:

Երկրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտն՝ արտասահմանյան երկրների օրենսդրությունում» վերտառությամբ պարագրաֆում, անդրադարձ է կատարվել և՛ անգլոսաքսոնական, և՛ մայրցամաքային երկրների օրենսդրություններում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի իրավական կարգավորման առանձնահատկություններին: Մասնավորապես, մանրամասն վերլուծվել է Անգլիայի, ԱՄՆ-ի, Ուկրաինայի, Բելոռուսի քրեական օրենսդրություններում արարքի հանցավորությունը բացառող այս հանգամանքի իրավական կարգավորվածության աստիճանը, առանձնացվել են նաև այն եվրոպական երկրները, որտեղ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը որպես արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանգամանք նախատեսված չէ, փորձ է արվել բացահայտելու դրա հնարավոր պատճառները: Այս պարագրաֆում ատենախոսը փորձել է համեմատել հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի՝ ՀՀ քրեական օրենսգրքով և նշված երկրների օրենսդրությամբ իրավական կարգավորման ընդհանրություններն ու տարբերությունները:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հեղինակը նշել է, որ և՛ թվարկված երկրների քրեական օրենսդրությամբ, և՛ ՀՀ քրեական օրենսգրքով հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելու նպատակները նույնն են:

Բացի այդ, ատենախոսն արձանագրել է, որ եվրոպական երկրների օրենսդրությունները քննարկվող ինստիտուտի առումով ՀՀ քրեական օրենսգրքի համեմատ էական, առանձնահատուկ տարբերություններ չունեն: Միաժամանակ, հեղինակի կողմից արձանագրվել են անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրների քրեական օրենսդրությամբ և ՀՀ քրեական օրենսգրքով հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի տարբերությունները, բացահայտվել է, որ, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումն անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված չէ, և այդ բացն այս երկրներում լրացնում են դատական նախադեպերը: Բացի այդ, ատենախոսն արձանագրել է, որ, ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրների քրեական օրենսդրությամբ առանձնացվում են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու երկու սուբյեկտներ՝ քաղաքացիներ ու իրավապահ մարմնի աշխատակիցներ և այս հանգամանքից կախված՝ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու տարբեր իրավիճակները նշված երկրների քրեական օրենսդրությամբ իրավական

ինքնուրույն և առանձին կարգավորման են ենթարկվում:

Երրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի հարաբերակցությունը արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ» վերտառությամբ պարագրաֆում, փորձ է արվել բացահայտելու նշված ինստիտուտի՝ արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ որևէ ընդհանուր, միավորող հատկանիշ ունենալու հարցը, ներկայացվել են այս, ինչպես նաև արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների դասակարգման խմբերի, այդպիսի դասակարգման համար հիմք հանդիսացող ընդհանուր չափանիշների հետ կապված Ա. Ա. Տեր-Հակոբովի, Յու. Վ. Բաուլինի մոտեցումները: Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը համեմատության է ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքներից յուրաքանչյուրի հետ, ներկայացվել են նշված ինստիտուտի և անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հիմնավորված ռիսկի, հրաման կամ կարգադրություն կատարելու հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները, այս կապակցությամբ գրականության մեջ առկա հիմնական տեսակետները:

Հրաման կամ կարգադրություն կատարելու հանգամանքի հետ ինստիտուտի համեմատումը զուգորդվել է նաև հանցանք կատարած անձին բռնելու սուբյեկտների հետ կապված Վ. Ա. Բիկմաշեվի, Ա. Վ. Մալկոյի, Վ. Բ. Բորովիկովի և այլ հեղինակների տեսակետների ներկայացմամբ, որի հիման վրա ատենախոսն արձանագրել է, որ, թեև հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու սուբյեկտների վերաբերյալ գրականության մեջ միասնական դիրքորոշման բացակայության հանգամանքին, այնուամենայնիվ, այս կապակցությամբ առկա է բոլոր հեղինակների կողմից ընդունվող և չվիճարկվող դիրքորոշում առ այն, որ, ի տարբերություն պաշտոնեական լիազորություններով չօժտված անձանց, իրավապահ մարմինների աշխատակիցների համար հանցանք կատարած անձին բռնելն օրենսդրությամբ նախատեսված պարտականություն է, որից վերջիններս հրաժարվել չեն կարող:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հեղինակը եզրահանգել է, որ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտը կապված է արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքների հետ, իսկ օբյեկտիվ իրականության մեջ հաճախ հատվում է դրանց հետ, ինչը, սակայն, չի բացառում քննարկվող ինստիտուտի՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի ինքնուրույնությունն ու կարևորությունը:

Չորրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հասկացությունն՝ ըստ ՀՀ քրեական իրավունքի» վերտառությամբ պարագրաֆում, ներկայացվել է ՀՀ քրեական օրենսգրքով քննարկվող ինստիտուտի ներկայիս իրավական կարգավորումը: Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի, ինչպես նաև ընդհանրապես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների՝ ՀՀ քրեական օրենսգքրում ունեցած դերի և նշանակության բացահայտման համար անդրադարձ է կատարվել

արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի էության և նշանակության բացահայտմանը, այս կապակցությամբ ներկայացվել են Ա. Հ. Գաբուզյանի, Վ. Պ. Մալկովի, Ա. Վ. Նաումովի մոտեցումները:

ՀՀ քրեական օրենսգրքի իրավակարգավորման առանձնահատկությունների հաշվառմամբ, քննարկվել է նաև այն հարցը, թե արդյոք հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը կարող է դիտարկվել նաև որպես հանրորեն օգտակար, հետևաբար նաև՝ բարոյապես թույլատրելի գործողություն: Խնդրո առարկայի հետ կապված կրկին ներկայացվել են հայտնի քրեագետների՝ Ի. Յա. Կոզաչենկոյի, Ի. Ի. Կարպեցի, Ի.Ն.Կոմարովի՝ գրականության մեջ առավել հաճախ հանդիպող տեսակետները:

Վերոշարադրյալի հիման վրա ատենախոսն արձանագրել է, որ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը բռնելուն ուղղված գործողությունների իրավաչափությունը բնութագրող օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշների համակցություն է՝ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ու բավարար ֆիզիկական վնաս պատճառելու միջոցով:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու՝ որպես հանրորեն օգտակար, հետևաբար նաև՝ բարոյապես թույլատրելի գործողության հարցի կապակցությամբ հեղինակը եկել է այն եզրահանգման, որ այս առումով հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելը կարող է իրավաչափ համարվել միայն հետևյալ փոխպայմանավորված հանգամանքների առկայությամբ՝ 1) բռնվողին պատճառվող վնասի և դրա նպատակի միջև հակասության բացակայություն, 2) բռնելու համար ոտնձգողին վնաս պատճառելու անհրաժեշտություն, 3) վնաս պատճառելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման բացակայություն:

Երկրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափությունը» վերտառությամբ գլուխը, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հիմքերն ու պայմանները» վերտառությամբ պարագրաֆում, բացահայտվել են հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի իրավաչափության հիմքերն ու պայմանները՝ ինստիտուտի իրավաչափության հիմքերի և պայմանների տեսակների ու դասակարգման վերաբերյալ գրականության մեջ առկա մոտեցումների վերլուծության հիման վրա:

Ամփոփելով ուսումնասիրությունն՝ ատենախոսն արձանագրել է, որ ոտնձգողին բռնելիս վնաս պատճառելու հիմքեր են համարվում 1) ոտնձգողի կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելը, 2) միայն ոտնձգությունից հետո անձին վնաս պատճառելը, 3) ոտնձգողի՝ իշխանության մարմիններին ներկայանալուց խուսափելը:

Ատենախոսը որպես բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության պայմաններ է առանձնացրել 1) վնաս պատճառելը միայն այն անձին, ով կատարել է ոտնձգությունը, 2) բռնելիս վնաս պատճառելու նպատակը, 3) վնաս պատճառելու՝ որպես բռնելու միակ միջոց հանդիսանալու հանգամանքը,

4) բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման անթույլատրելիությունը:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հիմքերի ու պայմանների ներկայացման և քննարկման հետ մեկտեղ առանձին անդրադարձ է կատարվել նաև հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հիմք հանդիսացող ոտնձգությունների շրջանակի սահմանափակման մասին գրականության մեջ առկա տեսակետներին, ներկայացվել են այս հարցի կապակցությամբ Ա. Վ. Նաումովի, Վ. Ի. Ռադչենկոյի դիրքորոշումները:

Վերոշարադրյալն ամփոփելով՝ ատենախոսը հայտնել է այն դիրքորոշումը, որ հանցանք կատարած անձին վնաս պատճառելը չպետք է կապել նրա կողմից կատարված ոտնձգության (հանցագործության) ծանրության հետ և ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր հանցագործության պարագայում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը պետք է համարել իրավաչափ, եթե, իհարկե, պահպանվել են բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության մյուս հիմքերն ու պայմանները: Նշված տեսակետն ատենախոսը հիմնավորել է այն հանգամանքով, որ ցանկացած ոտնձգություն, անկախ ծանրության աստիճանից, արդեն ինքնին հանրային որոշակի վտանգավորություն ունեցող և հասարակական հարաբերությունները վնասող արարք է, ինչն էլ կանխորոշում է այդպիսի արարք կատարած անձի նկատմամբ պետության կողմից կիրառվելիք համապատասխան հարկադրանքը՝ քրեական պատասխանատվության և պատժի ձևով: Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը հենց վերը նշված հարկադրանքի ապահովմանն ուղղված գործողություն է, հետևաբար՝ կատարված ցանկացած ծանրության ոտնձգության պարագայում էլ այդպիսի հարկադրանքի ապահովման անհրաժեշտությունն առկա է, ինչն էլ, իր հերթին, ենթադրում է, որ հանցանք կատարած անձին պետության կողմից կիրառվելիք հարկադրանքի ապահովման նպատակով բռնելիս վնաս պատճառելը ցանկացած ծանրության հանցագործության պարագայում պետք է իրավաչափ համարել, եթե, իհարկե, պահպանվել են բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության մյուս հիմքն ու պայմանները:

Ատենախոսի կողմից որպես հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հաջորդ հիմք է ներկայացվել միայն ոտնձգության կատարումից հետո՝ մինչև քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելը, ոտնձգողին բռնելը: Հատկապես շեշտադրվել է այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով կարգավորվում է բացառապես այն իրադրությունը, երբ ոտնձգողը, ավարտելով հանցավոր արարքը կամ չկարողանալով այն ավարտին հասցնել իր կողմից անկախ հանգամանքներով, փորձում է թաքնվել: Բոլոր մյուս դեպքերում անձին վնաս պատճառելու դեպքերն անհրաժեշտ է դիտարկել արարքի հանցավորությունը բացառող այլ հանգամանքի շրջանակներում և կարգավորել դրանք այդ ինստիտուտի նորմերով:

Ատենախոսությունում հեղինակի կողմից որպես ինստիտուտի

իրավաչափության երրորդ հիմք է ներկայացվել ոտնձգողին բռնելիս վնաս պատճառելը միայն այն դեպքում, երբ վերջինս, կատարելով ոտնձգություն, խուսափում է իշխանության մարմիններ ներկայանալուց, հետևաբար՝ խուսափում է քննությունից և դատից: Ինստիտուտի իրավաչափության այս հիմքը վերլուծելիս հեղինակի կողմից շեշտադրվել է այն, որ բռնելիս վնաս պատճառելու նշված հիմքն արտահայտում է բռնողի և բռնվողի միջև տվյալ պահին առկա բախումային իրադրությունը, որի բացակայությունն ուղղակիորեն բացառում է անձին վնաս պատճառելու անհրաժեշտությունը, ուստի այս դեպքում վնաս պատճռելը պետք է օբյեկտիվորեն բխի բռնելու իրադրությունից, կատարված արարքի հանրային վտանգավորությունից, բռնվողի անձից:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի իրավաչափության հիմքերի վերլուծությունից հետո ատենախոսն անդրադարձել է ինստիտուտի իրավաչափության պայմանների ներկայացմանն ու քննարկմանը:

Հեղինակի կողմից որպես ինստիտուտի իրավաչափության առաջին պայման քննարկման և վերլուծության է ենթարկվել բռնելիս միայն ոտնձգություն կատարած անձին վնաս պատճառելը: Արձանագրելով, որ հանրորեն վտանգավոր ոտնձգությունը կոնկրետ անձի կողմից կատարված լինելու վերաբերյալ բռնողի համոզվածությունն ընդգրկում է երկու ինքնուրույն տարրեր (կատարված ոտնձգության դեպքի անմիջական ընկալումը բռնողի կողմից կամ ոտնձգության և այն կատարած անձի մասին տեղեկության ստացումը երրորդ անձանցից և բռնելիս այն անձին վնաս պատճառելն, ով կատարել է քրեական օրենքով պաշտպանվող շահերը վնասող, հանրորեն վտանգավոր արարք կամ հանցագործություն), առանձին անդրադառնալով այդ տարրերից յուրաքանչյուրին, ատենախոսը հատկապես առանձնացրել է այն հարցը, թե արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածում ամրագրված «հանցանք կատարած անձ» եզրույթը կարող է բավականաչափ հիմնավորված և ճշգրիտ լինել: Նշված հարցի կապակցությամբ ատենախոսության այս հատվածում հեղինակը ներկայացրել է նաև իր կողմից քննիչների, դատախազների, փաստաբանների և դատավորների, ընդհանուրը՝ 100 անձանց շրջանում անցկացված հարցման արդյունքները՝ նշելով, որ անցկացված հարցման մասնակիցների 100%-ն այն կարծիքն է արտահայտել, որ օրենսգրքում «հանցանք կատարած անձ» եզրույթը ենթակա է փոփոխման: Նշված տեսակետը բացառապես հիմնավորվել է անմեղության կանխավարկածի առկայությամբ, այն հանգամանքով, որ անձը հանցագործության մեջ կարող է մեղավոր համարվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, հետևաբար՝ «հանցանք կատարած անձի» մասին կարելի է խոսել միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պայմաններում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հեղինակն արձանագրել է, որ օգտագործելով «հանցանք կատարած անձ» եզրույթը, ՀՀ քրեական օրենսգիրքը քրեաիրավական միանգամից երկու ինքնուրույն հարցեր է կանխորոշում. 1) «պարտադրում» է, որ բռնողը բռնելու բախումային և տագնապալի իրադրությունում հստակ կողմնորոշվի անձի կատարած արարքի

իրավաբանական գնահատականի հարցում, ավելին՝ որոշի այդպիսի արարքի հանրային վտանգավորության աստիճանը և ըստ այդմ ընտրի անձին հասցվող վնասի չափը, 2) բացառում է օբյեկտիվորեն հանրային վտանգավորության որոշակի աստիճան ունեցող և հասարակական հարաբերությունները վնասող արարք կատարած, սակայն քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձանց բռնելիս վնաս պատճառելու հնարավորությունը:

Ատենախոսն այն կարծիքն է հայտնել, որ անձի կողմից ոտնձգություն կատարելուց անմիջապես հետո բռնողի համար ակնհայտ կարող է լինել միայն կատարված արարքի հանրային վտանգավորությունը, երբեմն նաև՝ արարքի հետևանքով օբյեկտիվորեն առաջացած հետևանքները, և հենց այս գործոնների արդյունքում է, որ բռնողը պետք է կողմնորոշվի կատարված արարքի՝ քրեական օրենքով պահպանվող շահերին վնասած լինելու, հետևաբար՝ քրեորեն պատժելի լինելու հարցում: Միաժամանակ, ատենախոսը շեշտադրել է նաև այն, որ հանրային վտանգավորությունն ու հանրորեն վտանգավոր հետևանքները դեռևս կատարված արարքը հանցագործության վերածող տարրեր չեն, քանի որ հանրային վտանգավորությունն ընդամենը մեկն է հանցագործության բովանդակությունը կազմող երեք հատկանիշներից, իսկ հանրորեն վտանգավոր հետևանքները հանցագործության չորս պարտադիր տարրերից ընդամենը մեկի՝ օբյեկտիվ կողմի ոչ պարտադիր հատկանիշ են:

Վերոգրյալի հաշվառմամբ հեղինակն այն կարծիքն է արտահայտել, որ ՀՀ քրեական օրենսգրքում «հանցանք կատարած անձ» եզրույթին պետք է փոխարինի «հանրորեն վտանգավոր արարք կատարած անձ» եզրույթը, քանի որ հանրային վտանգավորությունն ակնհայտ է ոտնձգության կատաման բոլոր դեպքերում, գոյություն ունի օբյեկտիվորեն՝ մարդու գիտակցությունից և կամքից անկախ, և դրա առկայությունը որոշելու համար իրավաբանական գիտելիքներ կամ արարքը վայրկենապես գնահատելու լրացուցիչ գործոններ չեն պահանջվի: Ատենախոսի կարծիքով, նշված ձևակերպումը նաև օբյեկտիվորեն հանրային վտանգավորության որոշակի աստիճան ունեցող և հասարակական հարաբերությունները վնասող արարք կատարած, սակայն քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձանց բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հիմք կհանդիսանա:

Հեղինակի կողմից որպես քննարկվող ինստիտուտի իրավաչափության երկրորդ պայման վերլուծության է ենթարկվել բռնելիս վնաս պատճառելու նպատակը՝ ոտնձգողին իրավասու մարմիններին հանձնելը կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելը: Այս կապակցությամբ ատենախոսի կողմից նախ ներկայացվել են տարբեր քրեագետների (Ն. Ֆ. Կուզնեցովա, Վ. Ս. Կոմիսարովա, Ա. Ն. Պավլուխինա, Բ. Վ. Զդրավամիսլով, Յու. Ա. Կրասիկով) առկա գերակշիռ դիրքորոշումները, որից հետո վկայակոչվել են այս հարցի կապակցությամբ կատարված հարցման արդյունքները, համաձայն որոնց՝ հարցման մասնակիցների 75%-ը գտել է, որ բռնելիս անձին վնաս պատճառելու՝ ՀՀ

քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով սահմանված նպատակներն՝ անձին իրավասու մարմնին հանձնելը կամ նրա կողմից նոր հանրորեն վտանգավոր արարքները կատարելը խափանելը, բավականաչափ հիմնավորված են: Նշված անձանց կարծիքով, անձի կողմից նոր հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու մասին կարող են վկայել նրա կատարած գործողությունները կամ հանցավորի անձը (հետախուզվող ահաբեկիչ, սպանության համար նախկինում բազմիցս դատապարտված և այլն):

Ամփոփելով վերոգրյալը՝ հեղինակը հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու նպատակներից մեկի՝ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու՝ որպես բռնելիս վնաս պատճառելը իրավաչափ դարձնող պայմանի առկայությունը հիմնավոր չի համարել և ներկայացրել է պաշտպանության ենթակա դրույթ այն մասին, որ նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակն անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման չի հանդիսանում:

Նշված եզրահանգումն ատենախոսը հիմնավորել է այն հանգամանքով, որ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը՝ նրան իրավասու մարմնին հանձնելու նպատակով, արդեն իսկ ենթադրում է այն, որ բռնող անձը դրանով իսկ նաև անձի կողմից նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելը խափանելու նպատակ է հետապնդում: Այլ կերպ ասած՝ իրավասու մարմնին հանձնելու նպատակից արդեն իսկ բխում է նոր հանրերոն վտանգավոր արարք կատարելը խափանելու նպատակը, և դժվար է պատկերացնել, որ անձը կարող է իրավասու մարմնին հանձնվել առանց նրա կողմից նոր հանրերեն վտանգավոր ոտնձգություն կատարելը կանխելու (խափանելու, ընդհատելու) նպատակի: Նշվածը հիմնավորելու համար ատենախոսը շեշտադրել է նաև «խափանել» բառը՝ գտնելով, որ քրեաիրավական առումով խափանել կարելի է այն, ինչը սկսվել և շարունակվում է կամ սկսվելու իրական վտանգ է պարունակում: Հեղինակի կարծիքով, եթե «խափանել» բառի քրեաիրավական այս իմաստն ընդունվում է, ապա ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածը նկատի ունի անձին բռնելիս վնաս պատճառելը արդեն իսկ սկսված և շարունակվող կամ սկսվելու իրական վտանգ պարունակող նոր հանրորեն վտանգավոր ոտնձգությունը խափանելու նպատակը: Հեղինակն ակնհայտ է համարել, որ այս դեպքում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի նորմերը ենթակա չեն կիրառման, քանի որ անձին վնաս է պատճառվում մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, հասարակության և պետության շահերը նրա կողմից գործադրված հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից պաշտպանելու նպատակով, հետևաբար այս դեպքում կիրառման են ենթակա անհրաժեշտ պաշտպանության իստիտուտի նորմերը:

Ատենախոսի կարծիքով, նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակն անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման դիտարկելը չի կարելի հիմնավոր

համարել նաև անձի կողմից ապագայում կատարվելիք հանրորեն վտանգավոր ոտնձգությունը խափանելու անհրաժեշտության վկայակոչմամբ, քանի որ եթե անձը տեղում, բռնվելու նպատակով հետապնդվելուց անմիջապես առաջ նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելուն ուղղված ոչ մի գործողություն չի կատարում, ապա ոչ մի այլ հանգամանք (այդ թվում՝ բռնվողի անձը, նրա կողմից արդեն իսկ կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանը) չի կարող հաստատապես վկայել այն մասին, որ նա ապագայում ևս նոր հանցագործություններ կկատարի: Իսկ այս հանգամանքի՝ հաստատապես հայտնի չլինելու պայմաններում հենց այս հիմքով հանցանք կատարած անձին վնաս պատճառելն իրավաչափ համարվել չի կարող:

Այս կապակցությամբ հեղինակը վկայակոչել է նաև կատարված հարցման մասնակիցների 25%-ի կարծիքն այն մասին, որ նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակն անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման հանդիսանալ չի կարող:

Հեղինակի կողմից որպես ինստիտուտի իրավաչափության երրորդ պայման քննարկման և վերլուծության է ենթարկվել բռնելիս վնաս պատճառելու՝ որպես անձին իրավասու մարմնին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար վտանգավոր նոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու միակ միջոցը հանդիսանալու հանգամանքն այն շեշտադրմամբ, որ վնասի պատճառումը իրավաչափ է միայն այն ժամանակ, երբ այն հանդիսանում է անձին բռնելու միակ միջոցը, առանց որի ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված նպատակներն իրագործվել չեն կարող: Եթե հանցանք կատարած անձը կարող է բռնվել, հետևաբար՝ նշված նպատակներին կարելի է հասնել նաև այլ, վնաս պատճառելու հետ չկապված միջոցներով, ապա վնաս պատճառելու եղանակով անձին բռնելը չի կարելի իրավաչափ համարել:

Խնդրո առարկա պայմանը քննարկելիս ատենախոսը շեշտադրել է այն հանգամանքը, որ վնաս պատճառելու՝ որպես նշված նպատակներին հասնելու միակ միջոցը լինելու մասին ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածը որևէ նշում չի պարունակում: Այս կապակցությամբ հեղինակը վկայակոչել է ծայրահեղ անհրաժեշտության հասկացությունը սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասում տրված առավել կատարյալ ձևակերպումը: Ատենախոսն արտահայտել է այն կարծիքը, որ բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման իրադրությունում, որը բնորոշվում է որպես արարքի և դա կատարող անձի վտանգավորության հետ բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանություն, նկարագրվում է անձին բռնելու և բռնելու համար նրան վնաս հասցնելու այն իրավիճակը, երբ արդեն բռնող անձն արդեն համոզվել է վնաս պատճառելու հետ չկապված միջոցներով անձին բռնելու անհնարինության մեջ: Նշվածի հիման վրա ատենախոսը եկել է այն եզրահանգման, որ բռնելիս վնաս պատճառելու միակ միջոցը հանդիսանալու համոզմունքի ձևավորումը բռնող անձի մեջ ժամանակի ընթացքում նախորդում է բռնելիս վնաս պատճառելու այս կամ այն միջոցի ընտրությանը և դրա՝ արարքի և

դա կատարող անձի վտանգավորությանը համապատասխանելիության հարցի որոշմանը:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հեղինակը եզրակացրել է, որ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելն այս առումով իրավաչափ չի կարող համարվել հետևյալ առանձին իրադրություններից թեկուզև մեկի առկայության պայմաններում. 1) հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելը չի եղել նրան իրավասու մարմնին հանձնելու միակ միջոցը, 2) վնաս պատճառելու՝ որպես բռնելու միակ միջոցը հանդիսանալու պայմաններում անձին պատճառվել է վերջինիս և նրա կատարած արարքին ակնհայտ անհամապատասխան վնաս: Վերոշարադրյալի հիման վրա ատենախոսն առաջարկել է ՀՀ քրեական օրենսգրքում որպես հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման նախատեսել այն հանգամանքը, որ վնաս պատճառելը հանցանք կատարած անձին բռնելու միակ միջոցը պետք է լինի:

Երկրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս ոչ իրավաչափ վնաս պատճառելու դեպքերի որակման հիմնախնդիրները» վերտառությամբ պարագրաֆում, ներկայացվել և վերլուծվել են բռնելիս ոչ իրավաչափ վնաս հասցնելու՝ առավել հաճախ հանդիպող իրադրություններն ու վերջիններիս քրեաիրավական որակման հետ կապված հիմնախնդիրները: Հեղինակի կողմից առանձնացվել են տարբեր գրականության մեջ (Ա. Լ. Ցվետկովիչ, Ա. Ս. Գորելիկ, Ա.Վ. Նաումով) առավել քննարկվող և բռնելիս վնաս պատճառելու իրադրությունում հաճախ հանդիպող հետևյալ սխալները՝ բռնվող անձի մեղավորության վերաբերյալ սխալը (բռնելիս վնաս է պատճառվում հանրորեն վտանգավոր արարք չկատարած անձին), բռնվող անձի կատարած արարքի վերաբերյալ սխալը (անձի կատարած արարքը հանրության համար վտանգավոր, քրեորեն պատժելի ոտնձգություն չէ), բռնվող անձի անձնային հատկանիշների վերաբերյալ սխալը (անձն, ում բռնելիս վնաս է պատճառվել, անմեղսունակ է կամ չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված տարիքի): Այս կապակցությամբ հեղինակը հիմնավոր է համարել նշված իրադրություններում անձի արարքը փաստական սխալի կանոններով որակելու մասին գրականության մեջ առկա գերակշռող դիրքորոշումը:

Բացի այդ, ատենախոսության այս հատվածում անդրադարձ է կատարվել այն իրավիճակներին, երբ բռնելիս վնաս է պատճառվում քրեական պատասխանատվության ենթարկելու համար օրենքով նախատեսված տարիքի չհասած կամ որոշակի հոգեկան հիվանդությամբ տառապող հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին՝ այն պայմաններում, երբ բռնողի համար ոտնձգություն կատարած անձի՝ վերը նշված հատկանիշներն ակնհայտ են: Հեղինակն այս կապակցությամբ նախ ներկայացրել է նշված անձանց բռնելիս վնաս պատճառելու թույլատրելիության վերաբերյալ կատարված հարցման արդյունքները, համաձայն որոնց՝ հարցման մասնակիցների 65%-ը կարծիք է արտահայտել, որ հանցանք կատարած անձին բռնելու ինստիտուտի նորմերը արարքի հանրային վտանգավորությունը չգիտակցող կամ արարքը ղեկավարել

չկարողացող, ինչպես նաև քրեական պատասխանատվության համապատասխան տարիքի չհասած անձանց նկատմամբ կիրառելի լինել չեն կարող, քանի որ նշված անձինք հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանում, հետևաբար՝ այս դեպքում նրանց՝ պետական իրավասու մարմնին արդարադատություն իրականացնելու նպատակով հանձնելու նպատակն առկա չէ, իսկ հարցման մասնակիցների 35%-ի կարծիքով, բռնելիս վնաս պատճառել կարելի է նաև նշված կատեգորիայի անձանց, քանի որ արարքի հանրային վտանգավորությունը չգիտակցելու, արարքը ղեկավարել չկարողանալու կամ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու հանգամանքները կատարված արարքը չեն զրկում դրա՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող հանրային վտանգավորությունից, որի պարագայում այդպիսի անձանց իրավասու մարմնին հանձնելու նպատակն արդարացված է՝ արարքի կատարման պահին անմեղսունակ կամ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու հանգամանքները դատավարական կարգով ապացուցելու և կոնկրետ անձին մեկ այլ անձի կողմից հանցանք կատարելուն դրդելու կամ նրան հանցանքի կատարման մեջ օգտագործելու հանգամանքները պարզելու համար:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հեղինակն այն կարծիքն է արտահայտել, որ անձի կատարած արարքը հանրորեն վտանգավոր է օբյեկտիվորեն, այսինքն՝ սոսկ գործողության կամ անգործության կատարումն արդեն իսկ վնաս է պատճառում որոշակի արժեքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններին, իսկ վերջիններիս վնասվելը չի կարող պայմանավորված լինել արարքը կատարող անձի անձնային հատկանիշներով, այդ թվում՝ տարիքով, հոգեպես առողջ կամ հիվանդ լինելու հանգամանքով (արարքը կատարողի անձնային հատկանիշները կարևոր և անհրաժեշտ պայման են վերջինիս քրեական պատասխանատվության հարցը լուծելիս, բայց ոչ երբեք արարքի հանրային վտանգավորությունը գնահատելիս): Այս կապակցությամբ հեղինակը գտել է, որ բռնելիս վնաս կարող է պատճառվել ոչ միայն այն անձին, ով ունի հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշները, այլև նրան, ով օբյեկտիվորեն վտանգավոր արարք է կատարում, այնպիսի արարք, որը վնասում է կամ սպառնում է վնասել որոշակի արժեքի պաշտպանությունն ապահովող հասարակական հարաբերությունները: Հեղինակը գտել է, որ այս դեպքում այդպիսի անձանց բռնելիս իրավաչափ վնաս պատճառելն անհրաժեշտ է, և այս կատեգորիայի անձանց՝ իրավասու մարմնին հանձնելու նպատակը պետք է արդարացված համարել այն տեսանկյունից, որ միայն պետականորեն լիազորված իշխանության մարմնին է վերապահված հանրորեն վտանգավոր, քրեական օրենքով պահպանվող շահերը վնասող ոտնձգություն կատարված լինելու հիմքով համապատասխան պաշտոնական քննություն իրականացնելու, այսպիսի անձանց՝ հանցագործության կատարման մեջ այլ անձի կողմից ներգրավվելու հարցը պարզելու, արարքը կատարելու պահին անմեղսունակ լինելու կամ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելու հանգամանքները հաստատված համարելու իրավասությունը:

Ատենախոսության այս հատվածում անդրադարձ է կատարվել նաև

պաշտոնատար անձանց կողմից հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման դեպքերում նրանց արարքի որակման հիմնախնդրին, ներկայացվել են այս կապակցությամբ տարբեր քրեագետների (Վ. Ի. Դենեկա, Յու. Ն. Դեմիդով, Ռ. Ա. Բազարով) գրականության մեջ գերակշռող դիրքորոշումները: Ատենախոսն առավել հիմնավոր է համարել այն դիրքորոշումը, համաձայն որի՝ պաշտոնատար անձի կողմից հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման դեպքում անձը քրեական պատասխանատվության է ենթակա հանցագործությունների համակցությամբ՝ պաշտոնական լիազորությունները չարաշահելու կամ անցնելու և անձին կյանքին կամ առողջությանը հասված կոնկրետ վնասի համար, այն հիմնավորմամբ, որ պաշտոնատար անձանց և հանցանք կատարած անձին բռնելու պատահականորեն ծագած իրավիճակին առնչվող քաղաքացիների նկատմամբ հավասար պատասխանատվության կիրառումը չի կարելի արդարացված համարել, և հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարած անձին բռնելիս ոչ իրավաչափ վնաս հասցնելը միշտ էլ իշխանության ներկայացուցչի կողմից օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված որոշակի պարտականությունների չկատարում, թերի կատարում կամ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների սահմանազանցում է ենթադրում, որպիսի պայմաններում փաստացի հասցված ոչ իրավաչափ վնասից բացի, քրեաիրավական գնահատման է ենթակա նաև այդպիսի պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, չկատարումը կամ օրենսդրությամբ վերապահված լիազորությունների սահմանազանցման հանգամանքը:

Երրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավասությունը նախատեսող ՀՀ օրենսդրությունը» վերտառությամբ պարագրաֆում, ներկայացվել և հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորմանը համապատասխանության տեսանկյունից վերլուծվել են ոտնձգություն կատարած անձանց բռնելու, բռնելիս ուժ կիրառելու (վնաս պատճառելու) իրավապահ մարմինների լիազորությունը նախատեսող ՀՀ ներպետական օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: Մասնավորապես, այս առումով վերլուծության են ենթարկվել «Ոստիկանության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքները, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2011թ. նոյեմբերի 21-ի N 194-Ն և «Պահնորդների և թիկնապահների կողմից իրենց պարտականությունները կատարելիս հատուկ միջոցների մարտավարական գործադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանապետի 2012թ. նոյեմբերի 19-ի N 15-Ն

հրամանները:
Հեղինակն արձանագրել է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում, թվարկված մյուս օրենքների համեմատ, առավել ընդգրկուն և ՀՀ քրեական օրենսգրքի իրավակարգավորմանը առավել համապատախան է կարգավորվում հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու (ուժ կիրառելու) իրադրությունը:
Վերոգրյալի հետ մեկտեղ, հեղինակը շեշտադրել է այն, որ օրենքում հստակ չեն նախատեսվում հանցանք կատարած անձանց բռնելիս նրանց վնաս պատճառելու կոնկրետ նպատակները:
Վերլուծելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքն ատենախոսը նշել է, որ այն բավականին անորոշ է սահմանում ազգային անվտանգության մարմինների կողմից զենքի կամ հատուկ միջոցների կիրառման հիմքերն ու պայմանները: Օրենքի դրույթների բովանդակությունից պարզ չէ, թե որ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով են թույլատրվում զենքի ու հատուկ միջոցների կիրառման դեպքերը, որոնք են այդպիսիք կիրառելու համար հիմք հանդիսացող իրավիճակները և պայմանները:
«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը վերլուծելիս հեղինակը, դրական գնահատելով օրենքում հանցանք կատարած անձին բռնելիս զինծառայողի կողմից զենք գործադրելու (վնաս պատճառելու) երկու ինքնուրույն հիմքեր նախատեսված լինելը, այնուամենայնիվ, արձանագրել է, որ դրանք լիովին չեն համապատասխանում ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված՝ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու էությանն ու նպատակին, ուստիև լրամշակման կարիք ունեն: Այսպես, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի բովանդակությունից պարզ չէ՝ հանցանք կատարած անձին մեկուսացնելու նպատակը, անձը մեկուսացվում է նրան իշխանության մարմիններին հանձնելու, թե այլ նպատակով:
Հեղինակի կողմից նույն կերպ է բնորոշվել հանցանք կատարած անձի նկատմամբ զենքի գործադրման մյուս հիմքը, երբ հրամանատարի կողմից կամ նրա հրամանով զինծառայողի նկատմամբ զենք է գործադրվում (նրան վնաս է պատճառվում) վերջինիս կողմից այնպիսի հանցագործություն կատարած լինելու դեպքում, ինչպիսին է մարտի պարագաներում զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը: Հեղինակն արձանագրել է, որ այս պարագայում նույնպես պարզ չէ, թե ինչ նպատակով է զինծառայողի նկատմամբ զենք գործադրվում (նրան վնաս պատճառվում): Ավելին, նշված նորմի՝ օրենքում նախատեսված բովանդակության վերլուծությունից ստացվում է, որ զինծառայողի նկատմամբ զենք է գործադրվում մարտի պարագաներում զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու համար, վրեժի շարժառիթով կամ զինվորական ծառայության պարտականությունները կատարելուն ստիպելու համար :
Անդրադառնալով «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ

օրենքին, հեղինակը նշել է, որ օրենքում օգտագործված «վնասազերծել» եզրույթը լիովին չի կարող փոխարինել «բռնել» քրեական օրենքում սահմանված բառի իմաստին, քանի որ «վնասազերծել» բառը լիարժեք չի արտահայտում և չի բնորոշում ոտնձգություն կատարած անձին բռնելու իրավաիճակը. պարզ չէ՝ անձի վնասազերծումն անպայմանորեն զուգորդվում է նրան բռնելով, թե կարող է ֆիզիկական ուժի գործադրմամբ վնասազերծվել նաև հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարած, սակայն իր գործողությունները դադարեցրած, դիմադրություն ցույց չտվող և դեպքի վայրից փախուստի փորձ չկատարող անձը, եթե այո, ապա այս դեպքում որոնք են նրան վնասազերծելու հիմքերը:

Հեղինակը գտել է նաև, որ ոտնձգություն կատարած անձին բռնելիս (վնասազերծելիս) պահնորդը (թիկնապահը) պետք է ունենա նաև անձի նկատմամբ հատուկ միջոցներ կամ հրազեն գործադրելու իրավունք, բացի այդ, Օրենքում պետք է սպառիչ կերպով նախատեսվեն ոտնձգություն կատարած անձի նկատմամբ նրան բռնելու (վնասազերծելու) համար անհրաժեշտ վերը նշված միջոցների գործադրման հիմքերն ու պայմանները:

Անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2011թ. նոյեմբերի 21-ի N 194-Ն հրամանին՝ հեղինակը գտել է, որ կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ ուժի, այդ թվում՝ զենքի կիրառման (նրանց վնաս պատճառելու) կոնկրետ հիմքերի՝ իրավական ակտով նախատեսված չլինելու պայմաններում սույն հրամանի նպատակահարմարությունը և օգտակարությունը բավարար չափով հիմնավորված համարվել չի կարող

Քննարկելով «Պահնորդների և թիկնապահների կողմից իրենց պարտականությունները կատարելիս հատուկ միջոցների մարտավարական գործադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանապետի 2012թ. նոյեմբերի 19-ի N 15-Ն հրամանը, հեղինակն արձանագրել է, որ հատուկ միջոցների գործադրման հնարավորություն հանցանք կատարած անձանց բռնելիս Հրամանը չի նախատեսում: Ատենախոսը գտել է, որ հրամանում անհրաժեշտ է կատարել լրացում՝ դրանում նախատեսելով նաև հանցանք կատարած անձին բռնելու իրավիճակը՝ որպես հատուկ միջոցների գործադրման առանձին և ինքնուրույն դեպք, հակառակ դեպքում, փաստորեն, ոտնձգություն կատարած անձի նկատմամբ Հրամանի 13-15-րդ կետերում նախատեսված հատուկ միջոցների գործադրման դեպքերն օրինական և իրավաչափ համարվել չեն կարող:

Նշված իրավական ակտերում առկա դրույթները հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորմանը համապատասխանության տեսանկյունից վերլուծելով՝ հեղինակը եզրահանգել է, որ հանցանք կատարած անձին օրինական կերպով բռնելու հետ կապված այս կամ այն գործողությունները, նախատեսված լինելով վերը թվարկված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում, լիարժեքորեն չեն սահմանում այն ինքնուրույն հատկանիշները, որոնք կբնութագրեն անձին

բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության կոնկրետ հիմքերը, պայմանները և սահմանները, ուստի օրենսդրական և ենթաօրենսդրական նշված ակտերը բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հարցը լուծելիս կարող են էական նշանակություն ունենալ միայն վերը նշված թերությունները և բացթողումները շտկվելուց, հետևաբար նաև ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի՝ իր հերթին կատարելագործված իրավակարգավորմանը համապատասխանեցվելուց հետո:

Երրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը» վերտառությամբ գլուխը բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին, «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ պարագրաֆում, ատենախոսը ներկայացրել է սահմանազանցման ընդհանուր հասկացությունը, այս կապակցությամբ առանձին քննարկվել են սահմանազանցման հետ կապված բռնելու իրադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները: Ատենախոսության այս հատվածում հեղինակն անդրադարձել է նաև բռնելու հանգամանքների բնութագրման, հետևաբար նաև՝ վերջիններիս հետ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների համապատասխանության հարցի որոշման համար էական նշանակություն ունեցող և գրականության մեջ առավելապես առանձնացվող (Վ. Ի. Տկաչենկո, Ա. Ս. Ռաբադանով) հանգամանքներին:

Երկրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված սպանությունը» վերտառությամբ պարագրաֆում, ատենախոսի կողմից առանձին վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրերը: Հատկապես շեշտվել է այն, որ բացի արարքից, հանրորեն վտանգավոր հետևանքից և վերջիններիս միջև պատճառական կապից, հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ կատարված սպանության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ են արարքի կատարման իրադրությունը և ժամանակը: Հեղինակն անդրադարձել է նաև հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ գրականության մեջ առկա տարբեր դիրքորոշումներին՝ առանձին ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրը:

Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանության տարրերի վերլուծությունից հետո ատենախոսը համապատասխան հիմնավորմամբ ներկայացրել է հանցակազմը ՀՀ քրեական օրենսգրքից բացառելու վերաբերյալ իր դիրքորոշումը: Այս կապակցությամբ նախ վկայակոչվել են հանցանք կատարած անձին բռնելիս նրան կյանքից զրկելու իրավաչափության մասին գրականության մեջ առկա հիմնական տեսակետները: Հանցանք կատարած անձին կյանքից զրկելու իրավաչափության խնդիրն ատենախոսը քննարկել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տեսանկյունից: Այս կապացությամբ նախ ընդհանրացվել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված

կյանքի իրավունքի խախտման դեպքերով ՄԻԵԴ-ի կողմից գործերի քննության առարկան կազմող չորս հիմնական բաղադրիչները, որի հետ միաժամանակ ներկայացվել և քննարկվել են կյանքի իրավունքի խախտման դեպքերով ՄԻԵԴ-ի կողմից կայացված կոնկրետ գործերը և դրանցով կայացված վճիռները:

Վերոգրյալի հիման վրա ատենախոսն այն կարծիքն է արտահայտել, որ անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածը և որպես արտոնյալ բնորոշվող սպանությունների շարքից բացառել բռնելիս հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի սպանությունը: Իր դիրքորոշումն ատենախոսը հիմնավորել է նրանով, որ հանցանք կատարած անձին իրավասու մարմին հանձնելու նպատակը, որը հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության հիմնարար պայմաններից մեկն է, պետք է բացառի այդ թվում և անուղղակի դիտավորությամբ նրան կյանքից զրկելը: Այլ կերպ ասած՝ հանցանք կատարած անձին բռնելուց հետո իրավասու մարմնին հանձնելու նպատակ ունեցող անձը չի կարող գիտակցաբար թույլ տալ նրան կյանքից զրկելը՝ միաժամանակ հստակ գիտակցելով հանդերձ, որ, ոտնձգողին կյանքից զրկելով, չի կարող իր նպատակն իրականացնել:

Ատենախոսը հիմնավոր չի համարել նաև ոտնձգողի կողմից նոր հանրորեն վտանգավոր արարքների կատարումը կանխելու նպատակով նրան կյանքից զրկելը գիտակցաբար թույլ տալու իրավաչափության մասին առկա տեսակետները՝ գտնելով, որ եթե հանրորեն վտանգավոր արարք կատարած անձը նոր ոտնձգություն կատարելուն ուղղված ոչ մի գործողություն չի կատարում, ապա ոչ մի այլ հանգամանք չի կարող հաստատապես վկայել այն մասին, որ նա ապագայում նս նոր ոտնձգություններ կկատարի: Այս կապակցությամբ հեղինակը ներկայացրել է նաև կատարված հարցման արդյունքները, համաձայն որոնց՝ հարցման մասնակիցների 56%-ը, կողմ արտահայտվելով բռնելիս անձին կյանքից զրկելու մոտեցմանը, արտահայտել է այն դիրքորոշումը, որ բռնելիս կյանքից կարելի է զրկել միայն այն անձին, ով կատարել է կյանքի համար վտանգավոր բռնության հետ զուգորդված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք, և նրան բռնելու այլ միջոցներ չկան: Հարցման մասնակիցների 44%-ի կարծիքով, հանցանք կատարած անձին բռնելիս նրան կյանքից զրկելը որևէ կերպ չի կարող համընկնել անձին իրավասու մարմիններին հանձնելու նպատակի հետ, ուստի և բռնվող անձի սպանությունը թույլատրելի համարվել չի կարող:

Երրորդ, «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառելը» վերտառությամբ պարագրաֆում, ատենախոսի կողմից առանձին վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի տարրերը: Կրկին շեշտվել է այն, որ, բացի արարքից, հանրորեն վտանգավոր հետևանքից և վերջիններիս միջև պատճառական կապից, հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ առողջությանը ծանր, միջին ծանրության վնաս պատճառելու օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ են

արարքի կատարման իրադրությունը և ժամանակը: Անդրադառնալով հանցակազմի սուբյեկտիվ կողմին՝ ատենախոսը համաձայնել է հանցակազմի սուբյեկտիվ կողմն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ դրսևորվելու վերաբերյալ գրականության մեջ առկա գերակշռող դիրքորոշմանը:

Անդրադառնալով անձի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության մասին վկայող հնարավոր իրավիճակներին՝ ատենախոսն արձանագրել է, որ հանցանք կատարած անձի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը չի կարող ոչ իրավաչափ համարվել այն դեպքում, երբ վերջինս կատարել է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն և վնաս պատճառելը եղել է նրան բռնելու միակ միջոցը: Հետևաբար, բռնողի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ բռնելիս հանցանք կատարած անձի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառվում այն պայմաններում, երբ նա կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, ընդ որում, այն հանգամանքը, թե նրան համապատասխան վնաս հասցնելը եղել է արդյոք նրան բռնելու միակ միջոցը, այս դեպքում արդեն առաջնային իրավական նշանակություն ունենալ չի կարող: Եվ հակառակը՝ բռնողի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներն առկա կլինեն այն դեպքում, երբ բռնվող անձը կատարել է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն, սակայն առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը չի եղել հանցանք կատարած անձին բռնելու միակ միջոցը:

Եզրակացության մեջ ձևակերպված են հետազոտության արդյունքում ստացված եզրահանգումները, ինչպես նաև քննարկվող ինստիտուտի կատարելագործմանն ուղղված առաջարկները:

Ատենախոսության հիմնական եզրակացությունները հանգում են հետևյալին.

1. ՀՀ քրեական օրենսգրքում «Հանցանք կատարած անձ» եզրույթն անհրաժեշտ է փոխարինել «Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձ» եզրույթով, քանի որ այս դեպքում նախ՝ թույլատրելի կհամարվեն օբյեկտիվորեն հանրորեն վտանգավոր արարք կատարած, սակայն քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձանց բռնելիս վնաս պատճառելու դեպքերը, բացի այդ, բռնելու գործողություններ կատարող անձը զերծ կմնա կատարված արարքի քրեաիրավական գնահատականը վայրկենապես տալու և ըստ այդմ կատարված արարքը որպես հանցագործություն որակելու գրեթե անհնարին պարտականությունը կրելուց:

2. Առաջարկվում է անձին վնաս պատճառելու հանգամանքը չկապել նրա կողմից կատարված արարքի ծանրության հետ և ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված յուրաքանչյուր տեսակի հանցագործության (հանրորեն վտանգավոր արարքի) կատարման պարագայում հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը համարել իրավաչափ, եթե իհարկե, պահպանվել են բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության մյուս հիմքերն ու

պայմանները:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասից պետք է բացառել ներկայիս կարգավորմամբ բռնելիս վնաս պատճառելն իրավաչափ դարձնող նպատակներից մեկը՝ անձի կողմից նոր հանրորեն վտանգավոր ոտնձգություններ կատարելը խափանելու նպատակը, քանի որ այնածանցյալ է անձին իրավասու մարմնին հանձնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքում նշված նպատակից, բացի այդ, նոր հանրորեն վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելը վերաբերելի է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին, իսկ անձի կողմից ապագայում հանրորեն վտանգավոր ոտնձգություն կատարելու հանգամանքը նրան բռնելիս և ոչ մի պարագայում հաստատապես հայտնի լինել չի կարող, հետևաբար նաև՝ բռնելիս նրան վնաս պատճառելու իրավաչափության պայման չի կարող հանդիսանալ:

3. Առաջարկվում է հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու՝ որպես նրան բռնելու միակ միջոցը հանդիսանալու հանգամանքն օրենքում նախատեսել որպես բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության ինքնուրույն պայման, քանի որ վնաս պատճառելու՝ որպես բռնելու համար միակ միջոցը լինելու հարցի որոշումը ժամանակի ընթացքում մշտապես նախորդում է բռնելիս վնաս պատճառելու այս կամ այն միջոցի ընտրությանը և դրա՝ արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը համապատասխանելիության հարցի որոշմանը, քանի որ բռնողը նախ համոզվում է, որ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելու համար, բացի նրան վնաս պատճառելուց, այլ միջոցներ չկան և նոր միայն վնաս է պատճառում անձին՝ որոշելով վերջինիս և նրա կատարած արարքին այդ միջոցների համապատասխանելիության հարցն, ուստի բռնելիս վնաս պատճառելու՝ որպես անձին բռնելու միակ միջոցը չհանդիսանալու հանգամանքն արդեն իսկ ենթադրում է հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ոչ իրավաչափ լինելն՝ անկախ բռնելու միջոցների՝ արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը համապատասխանելու կամ ակնհայտ անհամապատասխան լինելու հանգամանքից:

4. Բռնելիս հանրորեն վտանգավոր արարք կատարած անձի սպանությունը՝ որպես մեղմացուցիչ հանգամանքներում կատարված, արտոնյալ հանցակազմ ՀՀ քրեական օրենսգրքում չպետք է նախատեսվի, քանի որ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին իրավասու մարմնին հանձնելու նպատակը պետք է բացառի անձին կյանքից զրկելու հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելուց հետո իրավասու մարմնին հանձնելու նպատակ ունեցող անձը չի կարող թույլ տալ նրան կյանքից զրկելը՝ միաժամանակ հստակ գիտակցելով հանդերձ, որ, հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին կյանքից զրկելով, իր նպատակը չի կարող իրագործվել:

5. Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու վերաբերյալ դրույթներ պարունակող և ատենախոսության մեջ մանրամասնորեն վերլուծված ՀՀ ներպետական օրենսդրության մեջ առկա

իրավական ակտերը պետք է համապատասխանեցվեն վերը նշված առաջարկությունների հաշվառմամբ լրամշակված ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթներին:

6. Վերոգրյալի հիման վրա՝ առաջարկվում է արարքի հանցավորությունը բացառող քննարկվող ինստիտուտի օրենսդրական հետևյալ ձևակերպումը.

«1. Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին վնաս է պատճառել նրան՝ իրավասու մարմիններին հանձնելու նպատակով բռնելիս, եթե անձին բռնելը չէր կարող իրականացվել վնաս պատճառելու հետ չկապված գործողություններով, և թույլ չի տրվել բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում:

2. Հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, որի հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ:

3. Բռնելիս հանրորեն վտանգավոր արարք կատարած անձին կյանքից զրկելն արգելվում է»:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հասկացությունն ու իրավաբանական բնույթը // Օրինականություն,2012 № 74, էջեր 51-59:

2. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտն՝ արտասահմանյան երկրների օրենսդրությունում // Դատական իշխանություն, 2013, № 2 (163), էջեր 82-87:

3. Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հիմքերը // Դատական իշխանություն, 2013, № 4 (165), էջեր 52-57:

Манукян Андраник Мартинович

Причинение вреда при задержании лица, совершившего преступление: современная ситуация и перспективы развития

Р Е З Ю М Е

Диссертация посвящена раскрытию роли и значения института причинения вреда при задержании лица, совершившего преступление, как исключающего преступность деяния обстоятельства, установлению характера и особенностей уголовно-правового института причинения вреда при задержании лица, совершившего преступление.

В диссертации подробно изучены действующие прежде нормы как отечественного уголовного законодательства, так и уголовного законодательства зарубежных стран, касающиеся исключающих преступность деяния обстоятельств, а также задержания лица, совершившего преступление, проанализированы характер и особенности уголовно-правового института причинения вреда при задержании лица, совершившего преступление, его соотношение с иными обстоятельствами, исключающими преступность деяния, исследованы основания и условия задержания лица, совершившего преступление, установлены допустимые рамки мер при задержании, проанализированы предусмотренные Уголовным кодексом РА категории конкретных преступлений, совершенных для задержания совершившего преступление лица с превышением необходимых мер.

Исследование вышеизложенных вопросов в диссертации сопровождается комментариями и позициями видных ученых-криминалистов, выдержками из Европейской конвенции о защите прав человека и основных свобод и анализированием ее положений, а также ссылками на прецедентное право Европейского суда по правам человека. Наряду с проведенным теоретическим исследованием формулированию соответствующих выводов главным образом способствовали опросы, проведенные автором среди следователей, прокуроров, судей и адвокатов относительно конкретных вопросов.

Проведенные исследования и сделанные на их основании заключения включены в выдвигаемые автором для публичной защиты положения, которые направлены на повышение роли и значения института причинения вреда при задержании лица, совершившего преступление, в системе обстоятельств, исключающих преступность деяния, на то, чтобы сделать более эффективным и обоснованным практическое применение этого института. Предложения автора по дальнейшему совершенствованию данного института заключаются в следующем.

Понятие “лицо, совершившее преступление” в Уголовном кодексе РА необходимо заменить на понятие “лицо, совершившее общественно опасное деяние”, так как в этом случае, во-первых, будут считаться допустимыми случаи причинения вреда при задержании совершивших объективно общественно опасное деяние, однако не достигших возраста уголовной ответственности либо невменяемых лиц, кроме этого, лицо, совершающее задержание, будет свободно от моментальной дачи уголовно-правовой оценки совершенного деяния и соответственно от несения практически невозможной обязанности квалификации совершенного деяния как преступления.

Обстоятельство причинения вреда лицу нельзя связывать с тяжестью совершенного им деяния, и при совершении любого из предусмотренных статьей 19 Уголовного кодекса РА категорий преступлений (общественно опасных деяний), причинение вреда при задержании лица, совершившего общественно опасное деяние, считать правомерным, если, конечно, соблюдены другие основания и условия правомерности причинения вреда при задержании.

Из части 1 статьи 43 Уголовного кодекса РА необходимо исключить одну из целей нынешнего регулирования, благодаря которой причинение вреда при задержании становится правомерным, а именно цель пресечения возможности совершения лицом нового общественно опасного деяния, так как она является производной от указанной в Уголовном кодексе РА цели передачи лица компетентным органам, кроме того, пресечение возможности совершения лицом нового общественно опасного деяния касается института необходимой защиты, а обстоятельство совершения лицом в дальнейшем общественно опасного посягательства при его задержании никак не может быть достоверно известно, следовательно, причинение ему вреда при задержании не может быть условием правомерности.

Обстоятельство причинения вреда при задержании лица, совершившего общественно опасное деяние, как единственный метод его задержания, в Законе необходимо предусмотреть как самостоятельное условие правомерности причинения вреда при задержании, так как решение вопроса о причинении вреда как о единственном методе задержания по времени всегда предшествует выбору того или иного метода причинения вреда при задержании и решению вопроса о его соответствии опасности деяния и лица, его совершившего.

Из Уголовного кодекса РА необходимо исключить положение относительно убийства совершившего общественно опасное деяние лица при его задержании, как привилегированного состава преступления, совершенного при смягчающих обстоятельствах, так как цель передачи совершившего общественно опасное деяние лица компетентным органам должна исключать возможность лишения лица жизни.

На основании вышеизложенного в Уголовном кодексе РА необходимо предусмотреть следующие законодательные положения относительно обсуждаемого института, исключающего преступность деяния:

“1. Преступлением не считается действие, причинившее вред совершившему общественно опасное деяние лицу при задержании его с целью передачи компетентным органам, если задержание лица не могло быть осуществлено без действий, связанных с причинением вреда, и не были превышены необходимые меры для задержания лица.

2. Превышением мер, необходимых для задержания лица, совершившего общественно опасное деяние, признается их явное несоответствие опасности деяния и лица, его совершившего, вследствие чего лицу умышленно причинен вред, не обусловленный необходимостью задержания.

3. При задержании лица, совершившего общественно опасное деяние, запрещается лишать его жизни.”

ANDRANIK MANUKYAN

INFLICTING DAMAGE WHEN CAPTURING THE PERPETRATOR: RELEVANCE AND THE DEVELOPMENT PERSPECTIVES

SUMMARY

The research is devoted to the disclosure of the role and importance of the discipline of inflicting damage when capturing the prepetrator as a circumstance excluding the criminality of the act and stipulation of the nature and characteristics of criminal and legal descipline of inflicting damage when capturing the perpetrator.

National and international former norms of the Criminal Code relating to the circumstances excluding the criminality of the act and capturing the perpetrator have been thoroughly studied in the dissertation. A detailed analysis has been conducted by the author aimed at tha nature and characteristics of the criminal and legal discipline of inflicting damage when capturing the perpetrator, as well as its relation with other circumstances excluding the criminality of the act. Besides,the grounds and condtions of capturing the perpetrator have been studied, permitable borders of capturing have been stipulated and certain types of crime, envisaged by the RA Criminal Code, commited by exceeding the necessary measures provided for inflicting damage when capturing the perpetrator have been analysed here.

The above mentioned issues have been studied alongside the interpretations and standpoints of prominent criminologists, and citing and analysing the case law of Euoropean Court of Human Rights as well as provisions of the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms that refer to certain issue.

The surveys on certain problems conducted by the author among inspectors, prosecutors, judges and lawyers have significantly contributed to reaching appropriate conclusions alongside the thoretical research.

The conducted studies and conclusions based on them are included in provisions submitted to defence by the author and are aimed at increasing the role and importance of the discipline of inflicting damage when capturing the perpetrator in the system of the circumstances excluding the criminality of the act and making the practical use of the disciplne more sound and effective. In this respect, the following proposals have benn made for the further improvement of the discipline:

The term "perpetrator" should be replaced by "a socially dangerous person", as under these circumstances the cases of inflicting damage when capturing insane persons or those having commited an objectively socially dangerous crime before reaching the age of criminal liability will be considered permitable, moreover, the person carrying out the activities of capturing will stay aside from an instant criminal and legal assessment of the commited act thus from bearing the almost impossible liability of evaluating the commited act as a crime.

The circumstance of inflicting damage when capturing the perpetrator must not to be linked with the gravity of the commited crime and under the circumstances of

commiting any type of crime (socially dangerous crime) envisaged by Article 19 of the RA Criminal Code, inflicting damage when capturing a person commited a socially dangerous crime cosider proportional, if the rest of the grounds and conditions of proprtioanality have been followed.

The aim of making the infliction of damage when capturing the perpetrator, namely the aim of preventing new socially dangerous violations from being made, proportional under the current regulation should be excluded from the 1st part of Article 43 of the RA Criminal Code, since it derives from the RA Criminal Code aim to hand the person to the authorized body and, besides, the prevention ofthe possibility a new socially dangerous violation refers to the discipline of necessary defence, and the circumstance of future possible socially dangerous violation cannot be obvious when capturing or in any other situation. Consequently, it cannot be considered a proportional condition for inflicting damage when capturing perpetrator.

The circumstance of inflicting damage when capturing a person commited a socially dangerous act of being the only measure of capturing him should be envisaged by the law as a separate proportional condition of inflicting damage when capturing him, since the decision of whether inflicting damage is the only measure of capturing has always proceeded the act of selecting this or that means of inflicting damage when capturing and whether it corresponds to the degree of the danger caused by the person committed the act.

Murder of a person committed a socially dangerous act should be excluded from the RA Criminal Code the former being carried out in milder circumstances, since the aim of handing a person committed a socially dangerous act to the authorized body should exclude the act of depriving a person of life.

Based on the above mentioned, the following legislative definition of the studied discipline should be envisaged by the RA Criminal Code:

"1 The actions whereby damage was inflicted to the perpetrator when capturing him, in order to hand him over to the authorized bodies or to prevent him from committing new socially dangerous actions, are not considered a crime, provided the necessary measures have not been exceeded.

2. As an act of exceeding the necessary measures for capturing a person committed a socially dangeours act is considered the obvious inadequacy of necessary measures for capturing to the act and the rate of danger of the person committed it, in the result of which the person has borne damage not determined by the necessity of capturing him.

3. Depriving of life a person committed a socially dangerous act is prohibited by the law".